

Մ.Հ.Մ.Հ. Կ.



C.A.R.P.S.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱՎ  
17-26 հուլիսի, 2017թ**

Սևանա լճի ստորջրյա ավազանի հերթական ութերորդ հետազոտական արշավը կիրականացվի 2017 թվականի հուլիսի 17-ից 26-ն ընկած ժամանակահատվածում: Նախորդ արշավների արդյունքները բավականին հուսադրող էին և արդյունավետ հայ գիտնականների համար: Ֆրանս-հայկական այս առաքելությունը իրականացվում է ծրագրի երկու պատասխանատուների՝ Կլոդ Թուլումջյանի (նախաձեռնող), Ստեփան Կոջայանի և ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիային գիտահետազոտական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի դասախոս-գիտաշխատողների, ինչպես նաև Բնապահպանության նախարարության և որոշ պետական մարմինների, այդ թվում՝ «Սևան Ազգային պարկի» հետ սերտ համագործակցությամբ:

2012թ-ից սկսած Սևանա լճի ստորջրյա գիտարշավները իրականացվում են Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՄՀՄՀԿ) պատասխանատվության ներքո: Հայկական այս կազմակերպությունը հիմնադրվել է 2012թ-ի մարտին՝ նախագահ Կլոդ Թուլումջյանի և փոխնախագահ Արա Ավագյանի ղեկավարությամբ (ՄՀՄՀԿ-ի հիմնախնդիրները ներկայացվում են կցված փաստաթղթում): Գիտարշավներին իր կարևոր աջակցությունն է ցուցաբերում ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանությունը և Հայաստանի Բնապահպանության Նախարարությունը: ՄՀՄՀԿ-ը հիմնականում զբաղվում է ստորջրյա սուզումներով և նպատակաուղղված է զարգացնել այս ոլորտը Հայաստանում:

Այս տարի գիտարշավի նպատակն է ընդլայնել ստորջրյա հետազոտությունների շրջանակը դեպի դեռևս չբացահայտված վայրեր: Հիշեցնենք, որ մինչ օրս Սևանա լճի մեծ մասն ուսումնասիրված չէ սուզորդների կողմից: ՄՀՄՀԿ-ն նպատակներից մեկն է նաև հարստացնել [www.sevanlalke.am](http://www.sevanlalke.am) ինտերնետային կայքը՝ Սևանա լճի և նրա վտակների

**Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)**

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

**Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)**

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742

Մ.Հ.Մ.Հ.Կ.



C.A.R.P.S.

բուսական և կենդանական աշխարհը ներկայացնող ստորջրյա լուսանկարներով և տեսանյութերով: ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանությունը, կնքելով համագործակցության համաձայնագիր, ՄՀՄՀԿ-ին է

վստահել [www.sevanlalke.am](http://www.sevanlalke.am) ինտերնետային կայքի պատասխանատվությունը, ինչը հանդիսանում է Սեւանա լճի բնապահպանական խնդիրների մեղիատիզացիա կանոնադրւյն միջոց : Ի դեպ, հուլիսի 10 -ին ՄՀՄՀԿ-ն հանդիպել է Սևան քաղաքի դպրոցականների, քննարկել նրանց հետ Սևանա լճին աջնչվող հարցեր, ներկայացրել լճի ստորջրյա աշխարհը և նրանց սպառնացող խնդիրները:

Հայաստանում ստորջրյա սուզումները զարգացնելու նպատակով ՄՀՄՀԿ-ն 2017 թ. հուլիսի 22-ին ժամը 10:00-ից 17:00-ը հրավիրում է բոլոր ցանկացողներին կատարելու սուզորդային « մկրտություն » Սևանա լճում: Այս սուզման անվճար առաջին փորձը նախապայմաններ ունի: Մասնակցության տեղերը սահմանափակ են, ինչի համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ գրելով [stephane.kojayan@hotmail.fr](mailto:stephane.kojayan@hotmail.fr) էլ. հասցեին, նշելով ձեր ազգանունը, անունը, ծննդյան տարեթիվը, հասակը, քաշը, կոշիկի չափսը և հեռախոսահամարը: Կընդունվեն առաջին 15 գրանցվողները: Յուրաքանչյուր թեկնածու միևնույն օրը կանցնի թեստավորում՝ 50 մ հեռավորության վրա լող լաստերով, դիմակներով և շնչառական ապարատներով, որոնք կտրամադրվեն անհրաժեշտության դեպքում:

Գիտարշավի ավարտին տեղիկունենա մամլո ասուլիս, որի ընթացքում կամփոփվեն ձեռք բերված նախնական արդյունքները:

### Տեղեկությունների համար դիմել՝

Էլլինա Հովսեփյան – [ellina\\_99@yahoo.fr](mailto:ellina_99@yahoo.fr)  
Արա Ավագյան (+374) 093.13.19.80 – [avagn1064@gmail.com](mailto:avagn1064@gmail.com)  
Ստեփան Կոչայան (+374) 098.42.39.58 – [stephane.kojayan@hotmail.fr](mailto:stephane.kojayan@hotmail.fr)  
Կլոդ Թուլումժյան (+374) 098.695.622 – [touloumdjian.cl@wanadoo.fr](mailto:touloumdjian.cl@wanadoo.fr)

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742